Կոնդակ Ս. Պետերբուրգի Հայոց եկեղեցական Խորհրդի նախագահի և անդամների անունով, որով յորդորուեց դրամական նպաստ տալ Օշականի ս. Մեսրոպեան եկեղեցական-ծխական դպրոցին՝ տօների գլուխ 1500-ամեայ և Հայ տպագրութեան 400-ամեայ յիշատակը յաւերժացնելու համար, ս. Մեսրոպի գերեզմանին կից եկեղեցական-ծխական դպրոցի շէնք կառուցանելու համար: 5 սեպտ., թ. 1314:

Դիւանի շրջաբերական գրութիւններ թեմական առաջնորդների անունով (բացի Բեսարաբ. առաջն.), որով առաջադրուեց զեկուցանել Նորին Վեհափառութեանը, թէ քա՞նի և ո՞րտեղերի ուսուցիչների համար են դիմում արել նահանգապետներին, ի՞նչ պատասխան են ստացել և ո՞րքան ժամանակից յետոյ: 11 սեպտեմբերի, թ. թ. 1332—1336:

Կոնդակ Տփխիսի Նպաստամատոյց Յանձնաժողովի անունով, որով յորդորուեց իրենց մօտ մնացած 75,000 ռուբ. գումարը յատկացնել աղքատ հայ գիւղերում ծխական դպրոցներ բանալու և պահպանելու: 14 սեպտեմբերի, թ. 1346:

Կոնդակ օրհնութեան Մայր Աթոռի նախկին բժիշկ պ. Կարապետ Տէր-Խաչատրեանի անունով՝ նորա 17 տարուայ ծառայութեան համար: 14 սեպտեմբերի, թ. 1347:

Դիւանի գրութեամբ յանձնարարուեց Սանասարեան վարժարանի Խնամակալութեան բացատրել Նորին Վեհափառութեանը, թէ ի՞նչու մինչև ցարդ չէ կատարուած Նորին Սրբութեան կոնդակը՝ Կարինում նոր դպրոց բանալու մասին, որ գրաւոր խոստացել էր Խնամակալութիւնը: 14 սեպտեմբերի, թ. 1356:

Դիւանի գրութեամբ յանձնարարուեց Աստրախանի թեմական առաջնորդին պաշտօնական կարգադրութիւն անել, որ շրջող հայ քահանաները այցելեն թեմի զանազան բանտարկուած հայերին և կատարեն նոցա հոգևոր պէտքերը, այլ և մխիթարել նոցա հոգեպէս: 18 սեպտեմբերի, թ. 1366: